ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N ՄԽ/6695-2026 «06» մարտի 2026թ.

Ռաֆ-Օջախ ՍՊԸ, Օ Փիեռ Գրուպ ունիվերսալ ՍՊԸ
և Գոհարիկ ՍՊԸ կոնսորցիում-ի
տնօրեններ պարոն Ա. Ասրյանին,
Հ. Միքայելյանին և Ս. Խաչատրյանին
(ք. Երևան, Վարդանանց 112, Գ. Նժդեհ 46,
Շիրակի մ, գ. Գետափ տուն 3011)

Ծանուցում

(Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին)

Հարգելի՛ պարոնայք Ասրյան, Միքայելյան և Խաչատրյան,

Հայտնում ենք, որ՝ Կադաստրի կոմիտեն «Կոմիտաս 35/2 հասցեում գտնվող Կադաստրի կոմիտեի շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների» ձեռքբերման նպատակով հայտարարել է «ԿԿ-ԲՄԱՇՁԲ-26/01» ծածկագրով բաց մրցույթը:

«ՌԱՖ ՕՋԱԽ» ՍՊԸ-Ի /Գործընկեր 1/, «Գոհարիկ» ՍՊԸ-Ի /Գործընկեր 3/ և «Օ Փիեռ Գրուպ ունիվերսալ» ՍՊԸ-ի /Գործընկեր 2/ միջև 05.01.2026թ. կնքվել է համատեղ գործունեության պայմանագիր:

«ՌԱՖ ՕՋԱԽ» ՍՊԸ, «Օ Փիեռ գրուպ ունիվերսալ» ՍՊԸ և «Գոհարիկ» ՍՊԸ կոնսորցիումը, «ԲԻԴԵՔՍ» ՍՊԸ, «Պրո Շին» ՍՊԸ, «ՀԷՄ» ՍՊԸ և «Վեհ Իշխանասար» ՍՊԸ կոնսորցիումը «ԿԿ-ԲՄԱՇՁԲ-26/01» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու հայտ են ներկայացրել:

Թիվ ԿԿ-ԲՄԱՇՁԲ-26/01 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 13.01.2026թ. կազմված թիվ 3 արձանագրության համաձայն՝ ՀՀ Կադաստրի կոմիտեի կարիքների համար «Կոմիտաս 35/2 հասցեում գտնվող Կադաստրի կոմիտեի շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների» ձեռքբերման նպատակով գնահատող հանձնաժողովի 2025 թվականի դեկտեմբերի 8-ի N1 որոշմամբ հայտարարված թիվ «ԿԿ-ԲՄԱՇՁԲ-26/01» ծածկագրով գնման ընթացակարգում նվազագույն գին առաջարկած մասնակցին նախատվություն տալու սկզբունքով բաց մրցույթում հաղթող է ճանաչվել «ՌԱՖ ՕՋԱԽ» ՍՊԸ, «Օ Փիեռ գրուպ ունիվերսալ» ՍՊԸ և «Գոհարիկ» ՍՊԸ կոնսորցիումը:

«ՊՐՈ ՇԻՆ» ՍՊ ընկերության կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ Կադաստրի կոմիտեի՝ ՀՀ Կադաստրի կոմիտեի կարիքների համար «Կոմիտաս 35/2 հասցեում գտնվող Կադաստրի կոմիտեի շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների» ձեռքբերման նպատակով գնահատող հանձնաժողովի 08.12.2025թ. N1 որոշմամբ հայտարարված թիվ ԿԿ-ԲՄԱՇՁԲ-26/01 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 13.01.2026թ. կազմված թիվ 3 արձանագրությամբ՝ ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «ՌԱՖ-ՕՋԱԽ» ՍՊ ընկերության, «Օ Փիեռ Գրուպ ունիվերսալ» ՍՊ ընկերության և «Գոհարիկ» ՍՊ ընկերության կոնսորցիումին ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացրած որոշումն անվավեր ճանաչելու/վերացնելու պահանջի մասին:

Վերը նշված հայցադիմումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի **02.02.2026թ.** թիվ ԵԴ2/0613/02/26 որոշմամբ ընդունվել է վարույթ:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ 1. Բացառությամբ «Գնումների մասին» օրենքով նախատեսված դեպքերի, պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների (անգործության) և որոշումների (բացառությամբ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված որոշումների) բողոքարկումն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված որոշումը հրապարակվելու օրվանից մինչև վեճի քննության արդյունքներով առաջին ատյանի դատարանի կայացրած եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրը:

03.02.2026թ. Կադաստրի կոմիտեի և Ռաֆ-Օջախ ՍՊԸ, Օ Փիեռ Գրուպ ունիվերսալ ՍՊԸ և Գոհարիկ ՍՊԸ կոնսորցիումի միջ կնքվել է թիվ ԿԿ-ԲՄԱՇՁԲ-26/1 պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր):

Ընդ որում հարկ է նշել, որ Պայմանագիրը կնքվել է 03.02.2026թ., մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 02.02.2026թ. թիվ ԵԴ2/0613/02/26 որոշմամբ հայցադիմումը վարույթ ընդունելու հանգամանքով պայմանավորված գնման գործընթացը 03.02.2026թ-ից պայմանագրի կնքման պահին կասեցված է եղել:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 30.03.2026թ. թիվ ԵԴ2/0613/02/26 օրինական ուժի մեջ մտած վճռով «Պրո Շին» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ Կադաստրի կոմիտեի բավարարվել է՝ անվավեր է ճանաչվել ՀՀ Կադաստրի կոմիտեի կարիքների համար «Կոմիտաս 35/2 հասցեում գտնվող Կադաստրի կոմիտեի շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների» ձեռքբերման նպատակով գնահատող հանձնաժողովի 2025 թվականի «դեկտեմբերի» «8» «N1» որոշմամբ հայտարարված թիվ «ԿԿ-ԲՄԱՇՁԲ-26/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից

13.01.2026 թվականին կազմված թիվ 3 արձանագրությամբ՝ ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Ռաֆ-Օջախ» ՍՊ ընկերության, «Օ Փիեռ Գրուպ ունիսվերսալ» ՍՊ ընկերության և «Գոհարիկ» ՍՊ ընկերության կոնսորցիումին ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացված որոշումը:

Պայմանագրի 8.3 կետի համաձայն՝ այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ **բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը**, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ **վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար:** Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

Ուստի հիմք ընդունելով այն, որ՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 30.03.2026թ. թիվ ԵԴ2/0613/02/26 օրինական ուժի մեջ մտած վճռով Անվավեր է ճանաչվել ՀՀ Կադաստրի կոմիտեի կարիքների համար «Կոմիտաս 35/2 հասցեում գտնվող Կադաստրի կոմիտեի շենքի կապիտալ վերանորոգման աշխատանքների» ձեռքբերման նպատակով գնահատող հանձնաժողովի 2025 թվականի «դեկտեմբերի» «8» «N1» որոշմամբ հայտարարված թիվ «ԿԿ-ԲՄԱՇՁԲ-26/01» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից 13.01.2026 թվականին կազմված թիվ 3 արձանագրությամբ՝ ընթացակարգի 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով «Ռաֆ-Օջախ» ՍՊ ընկերության, «Օ Փիեռ Գրուպ ունիսվերսալ» ՍՊ ընկերության և «Գոհարիկ» ՍՊ ընկերության կոնսորցիումին ընտրված մասնակից ճանաչելու մասին կայացված որոշումը, իսկ Պայմանագրի 8.3 կետի համաձայն՝ այն դեպքում, երբ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը Կապալառուին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար, հետևաբար Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 30.03.2026թ. թիվ ԵԴ2/0613/02/26 օրինական ուժի մեջ մտած վճիռը հիմք է հանդիսանում

Պայմանագիրը նույն Պայմանագրի 8.3 կետի համաձայն Պատվիրատուի կողմից միակողմանի լուծելու համար:
Ինչպես նաև՝ Պայմանագիրը կնքվել է 03.02.2026թ., մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 02.02.2026թ. թիվ ԵԴ2/0613/02/26 որոշմամբ հայցադիմումը վարույթ ընդունելու հանգամանքով պայմանավորված 03.02.2026թ. գնման գործընթացը Պայմանագրի կնքման պահին կասեցված է եղել:
Ելնելով վերոգրյալից, Պատվիրատուն միակողմանի լուծում է 03.02.2026 թվականին կնքված N ԿԿ-ԲՄԱՇՁԲ-26/01 ծածկագրով Պայմանագիրը: Ընդհանուր պատշաճ ծանուցումը ապահովելու նպատակով կիրառվում են «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները, որոնց համաձայն՝ սույն ծանուցումը Ձեզ ուղարկելու հետ միասին այն կհրապարակվի տեղեկագրում և Դուք կհամարվեք պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ այն տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

4/6/2026

X

ՄՀԵՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հարգանքով՝ Signed by: KHACHATRYAN MHER 4108790022 Մհեր Խաչատրյան

Կատարող՝ Ն. Ղուկասյան
Գնումների կազմակերպման բաժին
Հեռ.՝ 060-474142